

### Կ Ո Չ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՐ ՄԻՐԵՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

ԵՐՈՒՍԱԶԷՄԻ Ս. ՅԱՐՈՒՔԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ



Արտաշխարհի մէջ հայութեան մեծագոյն հոգեւոր ժառանգութիւնն է Ս. Քաղաքի Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռը և Ս. Յարութեան Տաճարի հայոց իրաւունքը՝ իբրև *պահապան Ս. Գերեզմանին*՝ Յոյն Օրդոտոֆա և Լատին-կաթոլիկ եկեղեցիներու հետ միասնաբար:

Քրիստոսի առաջին դարերէն սկսեալ Հայ ժողովուրդը ուխտի գնաց Ս. Երկրի աստուածակոյտ Ս. Տեղեաց և վանքեր ու եկեղեցիներ շինեց Աստուածորդոյն պաշտամունքին համար: Հայ թագաւորներ և իշխաններ, շինական ժողովուրդին հետ, ուխտի գնացին այդ մալիքական սրբավայրերուն, և իրենց իշխանական նուէրներով ու այրիի լուսաներով կառուցին Հայկական եկեղեցիներ ու վանքեր, որոնց սրբական կամարներուն տակ հնչեց Հայ յակեղէն լեզուն, և Նարեկացիի ու Շնորհալիի հոգեխոսով աղօթքներն ու շարականները:

Հայ ամիրաներ և պետական բարձր պաշտօնեաներ առատօրէն մալիքեցին Ս. Տեղեաց ազգային իրաւունքներու պաշտպանութեան համար: Աժէն հաւատացեալ Հայ ուխտաւոր յիշատակ մը քառուց Սրբոց Յակոբեանց վանքին կամարներուն տակ և Տէրունական սրբատեղեաց մէջ, ըլլայ Ս. Յարութեան Տաճարի, Գեթսեմանիի Ս. Աստուածածին Տաճարին, Համբարձման տեղոյն և Բեթղեհէմի Ս. Ծննդեան Տաճարին մէջ:

Դարերու ընթացքին, Ս. Երկիրը քատերաբեմ եղած է մեծ աշխարհակալներու արշաւանքներուն, և Տնօրինական սրբավայրերը յաճախ կործանած և դարձեալ վերաշինուած են: Ս. Յարութեան Տաճարը վերջին անգամ վերանորոգուած է 1808 թուականին, Յունաց ձեռնով՝ վերանստուգելն ծագած մեծ հրդեհի աւերէն յետոյ:

Այսօր, դարձեալ հիմնական նորոգութեան պէտք ունի, որուն ծախքը հսկայ գումար մըն է, գոր պէտք է վճարեն երեք իրաւակից ազգերը կամ եկեղեցիները՝ իբրև *պահապաններ Ս. Գերեզմանին*:

Հայոց բաժինը մէկ միլիոն տուարի կը հասնի, որուն մէկ երրորդը յաստացած է վճարել Գալուստ Կիւլալէնկեան Հիմնաբկութիւնը: Միւս երկու եկեղեցիները իրենց ետեւը ունին պետութիւններ և հարիւր միլիոնաւոր հետեւորդներ, իսկ Հայ ժողովուրդը իր «փոքր ածուած» պէտք է տէր կանգնի իր պարտին և իրաւունքին, ինչ որ մեծ պատիւ մըն է անդրանիկ քրիստոնեայ եկեղեցիին համար:

Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը, Նորին Ս. Օծուքիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսը ըմբռնելով գործին մեծութիւնը և վեհութիւնը՝ իբրև արժանաւոր հոգեւոր պետ և գլուխ Հայ ժողովուրդին՝ իր Ապրիլ 30, 1962 թուակիր հայրապետական կոնդակով՝ կոչ ուղղեց բովանդակ հայութեան, ի սփիւռս աշխարհի, իր մասնակցութիւնը բերելու այս առաւանգեցիլ ու սրբազան նպատակին:

Նորին Ս. Օծուքիւնը, իր Դեկտեմբեր 24, 1962 թուակիր պաշտօնագրով կը հարդրէ մեզի, թէ արդէն իսկ կազմած է համազգային Կեդրոնական Ցանձմաժողով մը այս նպատակին համար, և կը հրահանգէ մեզի կազմել տեղական յանձնախումբեր:

Ուստի, մե՛նք այսու, պաշտօնապէս կը հաղորդեմք մեր թեմի բովանդակ հայութեան, թէ կազմած ենք Ամերիկայի Կեդրոնական Ցանձմաժողովը, ըստ հետեւեալին.—

Ա. Ատեմապետ  
Տիար Հայկ Գալուէնեան

Բ. Ատենապետ  
Տխար Տատուր Տատուրեան  
Ա. Ատենադպիր  
Տխար Նշան Շահինեան  
Բ. Ատենադպիր  
Տխար Տիգրան Յ. Պոյանեան  
Գանձապահ  
Տխար Զարյոզ Գարակէօզեան  
հորհրդականներ  
Օրդ. Լէյլա Գարակէօզեան  
Տիկ. Ֆլորա Սարգիսեան  
Տիկ. Մաքրուհի Յովսէփեան  
Տխար Ալեք Մանուկեան  
Տխար Եղուարդ Մարտիկեան  
Զօր. Սարգիս Զարդարեան  
Տխար Յարութիւն Թադոսեան  
Տխար Ռիչըրտ Գ. Կրէկորի  
Տխար Ռուբըր վարդան  
Տխար Ճօրն Պաշեան  
Տխար Լըտ Շահպազեան  
Տխար Տիգրան Սմարեան

30 Յունուար 1963  
Նիւ Եորք

Եւ մենք այս գիրով կոչ կ'ուզենք Ամերիկայի համայն Հայ ժողովուրդին, որ առանց դաւանական և գաղափարական խտրութեան՝ տայ իր առատաձեռն իշխանական նուէրը և իր սրտաբուխ այրիի լուսան, որպէս զի վերանորոգութի Տիրոջ Ս. Գերեզմանի երկնականար տաճարը :

Երուսաղէմի Պատրիարքարանի կողմէ երկու նուիրակ վարդապետներ եկած են Ամերիկա—Հոգեշնորհ Տ. Շահէ վրդ. Անէմեան և Տ. Կիւրեղ վրդ. Գաբիկեան—որոնք պիտի կազմակերպեն հանգանակութիւնը :

Այսու, կը յորդորենք մեր թեմի պաշտօնական մարմիններուն և հոգեւորական դասուն, որպէս զի իրենց գործօն օժանդակութիւնը բերեն այս սրբազան գործի յաջողութեան համար :

Մաղբելով Աստուծոյ օրհնութիւնները բոլոր նւիրատուններուն .

Մնամք Տիրաւանդ սիրով  
ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
և Գանատայի